

ՖԵԼԻՔՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ԱՌԹԻՎ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆ

Փաստերի կեղծումը, խեղաթյուրումը և այդ բոլորը սեփական նպատակներին ծառայեցնելը եղել է մարդկային հասարակության բոլոր ժամանակներում: Սակայն նման երևույթները, եթե կատարվել են հնում, մեզ հաճախ կարող են հայտնի չլինել: Նման դեպքեր բազմիցս պատահել են Հին Արևելքի երկրներում, այդ թվում նաև Իրանում, հենց Դարեհ I-ի (522–486) ժամանակ: Սակայն այդ բոլորը պարզվում է ոչ միանգամից, այլ աստիճանաբար, հաճախ տասնամյակների ընթացքում: Այս առումով ամեն ասված բան չպետք է ընդունել հալած յուզի տեղ, քանի դեռ այն չի ճշտվել և հիմնավորվել:

1. Այսպես, ուրեմն, նորից անդրադառնալով Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հոդվածին և նրա նոր արտահայտած պարզաբանմանը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ հիշյալ ժամանակաշրջանի մասին եղած մեր պատկերացումները լիակատար չեն և կարիք ունեն ավելի խոր ուսումնասիրության: Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը գա շատ հստակ պատկերացում է և անձամբ էլ այդ մասին նշում, թեև որոշ հարցերի մասին, դժբախտաբար, բոլորովին չի էլ ակնարկում: Օրինակ, չի հիշված Վ. Վ. Ստրովեի շատ հետաքրքիր կարծիքը, ըստ որի ապստամբել են ոչ թե հայերը, այլ Հայաստանում տեղաբաշխված իրանական կայազորերը: Այս ենթադրությունը, իհարկե, ճիշտ լինել չի կարող, սակայն մտածելու տեղիք է տալիս:

2. Հայաստանի սատրապությունների քանակի հարցը խիստ կարևոր է: Հայաստանը գիտվել է որպես մեկ սատրապություն (ապստամբության ընթացքում), որի վրա պնդում է նաև հարգելի Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը: Սակայն Հայաստան ուղարկված երկու իրանական զորաբանակները, այն էլ տարբեր ուղղություններով, վկայում են ընդունված տեսակետի դեմ: Վահուստիսան արշավել է Տիգրիսի հովտով, ներխուժել է Աղձնիք և շրջակա տարածքները, որտեղ էլ հենց գտնվել է Իզալա մարզը: Իսկ Դադարչիչը արշավել է հարավ-արևելքից և սահմանի վրա էլ ընդհարվել է Տիգրա մարզի պաշտպանների հետ, որի անունը պահպանված է Տայգրյան գավառի անվան մեջ: Այնուհետև, խիստ կարևոր են ուրարտական աղբյուրները, որտեղ հիշատակվում են Աղձնիքը և հատկապես Մոփքը, որոնք ունեցել են անկախ պետականություն: Հենց այս է պատճառը, որ Դարեհ I-ի մոտ էլ գա զգացվում է: Դեռ ավելին, անտիկ աղբյուրներում Հայաստանի արևմտյան հատվածը կոչվում է հենց Արևմտյան Հայաստան, թեև նրա իշխանավորը ենթակա էր բուն Հայաստանի թագավորին: Այդ ամենը ինչոր չափով վկայված է նաև Ալեքսանդր Մակեդոնացու (336–323) օրոք, իսկ ավելի ուշ, հիշյալ տարածքները հանգես են գալիս որպես երկու առանձին թագավորություններ՝ Հայաստան և Մոփք, որոնք մինչև անկախանալը գտնվել են երկու տարբեր սատրապների ղեկավարության ներքո,

իսկ անկախանալուց հետո՝ Արտաշես I-ի (189–161) և Զարեհի գերիշխանության տակ. դրանք ավելի ուշ՝ Տիգրան II-ի (95–56) օրոք, միավորվեցին:

Այս բոլորը ցույց է տալիս, որ Հայաստանի երկփեղկվածությունը շատ հին արմատներ ունի, և այն պետք է որ գոյություն ունեցած լինե՞ր հենց Դարեհ I-ի ժամանակ ևս: Երկու տարբեր գորաբանակների գոյությունը հենց այդ է ապացուցում:

3. Կարծիք կա, որ Արախան հենց Բաբելոնում է եղել: Այգ իսկ պատճառով Մ. Ա. Դանդամաևը ենթադրում է, որ Բաբելոնի մոտակայքում հայկական գաղթավայր է եղել, թեև այդ մասին ոչ մի փաստ չկա: Միակ փաստն այն է, որ Արախան ապստամբել է Դուբայայում և գրավել Բաբելոնը: Այստեղից էլ եզրակացվում է, որ Դուբայան գտնվել է Բաբելոնի մոտ, թեև այգ մասին ոչ մի գրավոր տեղեկություն չի պահպանվել, իսկ հետագայում էլ նման անվամբ որևէ բնակավայր Բաբելոնի մոտակայքում չի գտնվել: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ Դուբայան գտնվել է ոչ թե Բաբելոնի մոտակայքում, այլ բոլորովին այլ վայրում: Սեպագիր և այլ աղբյուրներում հիշատակված Թաբալ երկրի անունը խիստ գայթակղիչ է: Թերևս սույն Թաբալ և Դուբայա վայրերը կապ ունեն իրար հետ, և Արախան էլ ապստամբելով Թաբալում, հետագայում գրավել է Բաբելոնը:

4. Նման ենթադրության հնարավոր լինելը կարելի է կոահել այն իրողությունից, որ կենտրոնական իշխանության դեմ ծառայած և այն իրեն ենթարկած Գառամատա մոգը անհրաժեշտաբար պետք է դաշնակիցներ որոնե՞ր, որոնցից մեկը կարող էր լինել հենց Հայաստանը: Այս տեսակետից Արախայի Բաբելոն հասնելը այնքան էլ դժվար մի բան չէր, երբ բոլոր սատրապությունները ապստամբել էին կենտրոնական իշխանության դեմ, և Դարեհ I-ը հնարավոր ամեն միջոց օգտագործում էր երկրի միասնականությունը վերականգնելու համար: Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը իրավամբ նշում է, որ Դարեհ I-ը հիշյալ ժամանակ Բաբելոնում էր, և Արախան Բաբելոն մտնել չէր կարող: Սակայն հեղինակը դիտե՞ր, որ հիշատակված հինդ ճակատամարտերը ոչ թե տեղի են ունեցել նկարագրվածի նման միմյանց հետևից, այլ խառը: Եվ վերջապես Արախան Բաբելոնում եղե՞ր է, թե՞ ոչ: Իհարկե, եղել է: Այս առումով Դարեհ I-ի Բաբելոնում լինելը կամ չլինելը ոչ մի նշանակություն չունի, մանավանդ որ իր և Արախայի Բաբելոնում լինելու մասին վկայում է հենց ինքը՝ Դարեհ I-ը:

Հեղինակը, խոսելով Արախայի կողմից Բաբելոնը գրավելու փաստի մասին, նշում է, որ նման պայմաններում, քանի որ Դարեհ I-ը Բաբելոնում էր, պետք է որ այնտեղից փախչե՞ր: Բայց սա մի՞թե ապացուցելու կարիք ունի: Եթե Դարեհ I-ը, իրոք, Բաբելոնից փախչե՞ր, մի՞թե այդ մասին գրավոր վկայություն էր թողնելու: Բոլորովին: Հին Արևելքի բոլոր տիրակալներն էլ իրենց պարտության մասին միշտ լուել են և թմբկահարել միայն իրենց հաղթանակները՝ այն էլ խիստ ուռճացված ձևով: Այս առումով խիստ դիպուկ և ուշագրավ է այն փաստը, երբ Մուհամմեզը (622–632) մի արշավանքի ժամանակ պարտություն է կրում և փախչում, բայց իր պարտությունը յուրայինների մոտ կոծկելու և հաղթություն ցույց տալու նպատակով, փախուստի ժամանակ հանկարծակի հարձակվում է մի հա-

րուստ բնակավայրի վրա, կողոպտում ամեն ինչ և այդ կողոպուտով փակում իրեն սպասող յուրայինների բերանը: Հետաքրքիր է, Դարեհ I-ը մի՞թե նման քայլի ընդունակ չէր:

5. Խիստ կարևոր է նաև այն հարցը, թե Դարեհ I-ը, Դադարչիչին ու Վահուժիսային արչավանքից առաջ զորք տվե՞լ է, թե՞ ոչ: Ըստ Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի Դարեհ I-ը իր զորավարներին զորք չի տվել: Նրանք տեղում են զորք հավաքել: Արդյո՞ք ճիշտ է սա: Կարելի է հարցը քննել և պատասխանը գտնել: Դադարչիչը և Վահուժիսան Հայաստանում կարո՞ղ էին զորք հավաքել: Հազիվ թե, քանի որ ապստամբած երկրում զորք հավաքելը ոչ միայն դժվար է, այլև անհնար: Այնուհետև, Դարեհ I-ի զորավարները Հայաստանի սահմաններին հասնելուն պես ճակատում են ապստամբների դեմ: Դադարչիչն, օրինակ, ընդհարվում է Հայերի հետ Տիգրա ամրոցում, որը գտնվում էր Հայաստանի հարավ-արևելյան սահմանների վրա: Ուստի, եթե Դադարչիչը Հայաստանում զորք հավաքեր, էլ ինչո՞ւ պետք է վերադառնար Հայաստանի հարավ-արևելյան շրջանը՝ Տիգրա ամրոցը գրավելու համար: Այնուհետև, առանց սահմանային այդ ամրոցը գրավելու Դադարչիչը, այն էլ առանց զորքի, կարո՞ղ էր մտնել Հայաստանի խորքերը: Դեռ ավելին, Վահուժիսան մտնում է Իզալա ճակատելու հայերի դեմ: Ուրեմն, ըստ Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի, Վահուժիսան նախ մտել է Հայաստան, զորք հավաքել, հետո վերադարձել է Արևմտյան Տիգրիսի ավազանում գտնվող սահմանային Իզալա մարզը և նոր միայն ճակատամարտ տվել ապստամբ հայերի դեմ: Նման ռազմավարությունը խիստ տարօրինակ կլիներ:

Ասվածը բավական է, որ Դադարչիչն ու Վահուժիսան Հայաստան են արչավել զորքով, թեկուզ այդ մասին Դարեհ I-ը ոչ մի բան չի ասում: Հետևաբար, շատ հարգելի հեղինակի ենթադրությունը բոլորովին չի համապատասխանում իրականությանը:

6. Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը իմ նախկին դիտողությունների վրա հենվելով, ինձ վերագրում է որոշ մտքեր, որ ես չեմ ասել, կամ ասել եմ ճիշտ, որ նա հերքում է առանց ապացույցների: Այսպես, օրինակ, ես ասել եմ, որ Դարեհ I-ը Դադարչիչին և Վահուժիսային պարսկական զորք է տվել: Իսկ ի՞նչ զարմանալի բան կա դրանում: Եվ իրոք, Դարեհ I-ը իր զորահրամանատարներին էլ ի՞նչ զորք կարող էր տալ: Այնուհետև, Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը կարծում է, որ ես իբր ասել եմ, թե Հայաստանի ամբողջ ժողովուրդը ապստամբել էր: Այսպիսի բան ես ասել չէի կարող թեկուզ այն պատճառով, որ հնում ապստամբություններն ունեցել են լոկալ բնույթ: Այդպես է եղել նաև նախկինում, անգամ մեր օրերում: Այնուհետև, ինձ վերադրված է նաև այսպիսի միտք. Տիգրա ամրոցը գտնվում է Տուշպայի տարածաշրջանում: Իմ մտքով այդպիսի բան անցնել չէր կարող այն պարզ պատճառով, որ Տիգրա ամրոցը եթե ես համարում եմ Տայգրյան գավառում գտնվող մի բերդավան, ապա այն Տուշպայի տարածաշրջանում գտնվել չէր կարող: Սակայն ինձ համար ավելի զարմանալի է Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի զարմանքը: Նա գրում է, որ նման պայմաններում Դադարչիչը ինչպե՞ս կարող էր 10 օրում Տուշպայից հասնել Հայկական Միջագետք: Շատ հետաքրքիր է, Հայկական

Միջազգետքը որտեղի՞ց լույս ընկավ: Բնագրում նման բան չի ասված: Իսկ եթե ենթադրում են, որ Ուլյամա ամրոցը կարող էր լինել հիշյալ Հայկական Միջազգետքում, ապա դա ապացուցված չէ, այլ հայտարարված է: Ավելի շուտ Ուլյամա ամրոցը գտնվել է Ուրմիա լճի կողմերում, և նրա անունը հանդիպում է հետադա հայ պատմագրության էջերում, այնպես որ Դա-գարչիչը 10 օրում Տուշպայից Հայկական Միջազգետք հասնելու կարիք չունենք:

7. Հայտնի է, որ Դարեհ I-ի գլխավոր թշնամին Գառմատա մոզն էր, որ բռնագրավել էր իշխանությունը և անգամ կրոնական հեղաշրջում կատարել: Դարեհ I-ը իր ընտիր գինակիցների հետ (բոլորը միասին՝ 7 նշանավոր պարսիկներ) որոշում է սպանել Գառմատա մոզին: Ընտրում են համապատասխան ժամանակը, վայրը՝ Սիկայահուվատիչ ամրոցը և կրոնական միտոնի ժամանակ իրագործում իրենց մտադրությունը: Դավադրությունը հաջողվում է, որից հետո Դարեհ I-ը և իր ընկերները փախչում են: Անհրաժեշտ է նշել, որ Գառմատա մոզի սպանությունից հետո անցնում է բավական ժամանակ, մինչև որ Դարեհ I-ը կարողանում է որոշ հաջողությու-նուններից հետո արշավել Սիկայահուվատիչ ամրոցի վրա, որտեղ սպանվել էր Գառմատա մոզը: Սակայն Գառմատա մոզի բարեկամներն արդեն հասցրել էին փառավոր թաղում կազմակերպել՝ եգիպտացիների նման զմուսելով հանգուցյալին: Խիստ կարևոր է վերջերս գտնված դամբարանա-կան համալիրը՝ ներքին արձանագրություններով, Գառմատայի սարկո-ֆագով, հատկապես մի որմնանկարով, որտեղ պարսիկների հետ միասին պատկերված է նաև Գառմատա մոզը: Դամբարանը ծածկել են հողով՝ տեղը թաքցնելու նպատակով, այնպես, ինչպես այն կատարվում էր հատկա-պես Եգիպտոսում և որոշ այլ երկրներում:

Այս ամենը մենք նշում ենք միայն այն պատճառով, որ Գառմատա մո-զը պետք է որ մեծ գեր ունեցած լիներ Հայաստանում կատարված ապս-տամբության ժամանակ: Այս հարցը բոլորովին չի ուսումնասիրված Ֆե-լիքս Տեր-Մարտիրոսովի կողմից: Եվ իզուր: Ֆելիքս Տեր-Մարտիրոսովը պետք է խորամուխ լիներ նաև հենց այս հարցի մեջ:

Նման աշխատանքի ժամանակ խիստ կարևոր է տվյալ ժամանակաշրջա-նին վերաբերող պատմաաշխարհագրական քարտեզի ճիշտ պատկերացու-մը: Հակառակ գեպքում սխալներն անխուսափելի կլինեն: Սա վերաբերում է նախկին բոլոր ուսումնասիրողներին, այդ թվում նաև Ֆելիքս Տեր-Մար-տիրոսովին: Անհրաժեշտ է մշտապես հիշել Մովսես Խորենացու այն միտ-քը, որ պատմությունը շարադրելու համար անհրաժեշտ է երկու բան՝ տեղ և ժամանակ: Այժմ եթե մենք ժամանակն ունենք, ապա տեղի մասին մեր ունեցած պատկերացումները անհրաժեշտ է վերանայել և ճշգրտել: